ՈՐՈՇՈՒՄ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 19.08.2021թ. թիվ 2113250904 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<05>> 10 2021թ. 7-13 15093 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Սևակ Հովսեփյանի թիվ ՄԴ/81548-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի Արտաշիսյան փողոցի 53/14 շենքի 26 բնակարանի բնակիչ Սևակ Հովսեփյանը դիմումով խնդրել է վերանայել վարչական տույժ նշանակելու մասին 19.08.2021թ. թիվ 2113250904 որոշումը՝ նշելով, որ համաձայն չէ իրավախախտման հետ, քանի որ գծանշումը հատել է լուսացույցի դեղին ազդանշանով, այլ ոչ թե կարմիր:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը վերանայելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

*<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:*

*ՀՀ կառավարության <<ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին>> թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ **դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը** (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին: Ըստ նույն որոշման 18-րդ կետի՝ լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի <<Կանգ-գիծ>> գծանշման առջև: Ըստ նույն որոշման 19-րդ կետի՝ դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորողը ձեռքը բարձրացնելու դեպքում այն վարորդները, որոնք հնարավորություն չունեն առանց կտրուկ արգելակելու կանգնել կանոնների 18-րդ կետում նշված տեղերում, կարող են շարունակել երթևեկությունը:*

Իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ զետեղված տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուի արարքն արձանագրված խաչմերուկում առկա լուսացույցի վրա դիմումատուի <<Կանգ-գիծ>> գծանշումը հատելու պահին միացված է եղել լուսացույցի դեղին՝ արգելող ազդանշան: Այսպես՝

- տեսանյութի 15:54:32-րդ վարկյանին միանում է լուսացույցի դեղին արգելող ազդանշանը, երբ դիմումատուի տրանսպորտային միջոցը գտնվել է <<Կանգ-գիծ>> գծանշման առջև,

- դիմումատուի տրանսպորտային միջոցը <<Կանգ-գիծ>> գծանշումը հատել է միայն տեսանյութի 15:54:34-րդ վայրկյանին, երբ դեռ շարունակվում էր միացված մնալ լուսացույցի արգելող ազդանշանը:

Տեսանյութը փաստում է նաև, որ վարորդի գործողություններում բացակայել են ՀՀ կառավարության թիվ 955-Ն որոշման 19-րդ կետի հատկանիշները, քանի որ լուսացույցի դեղին ազդանշանի միանալու պահին վերջինս հնարավորություն ունեցել է առանց կտրուկ արգելակելու կանգառ կատարել սահմանված վայրում:

Վերը նշված փաստերի վերլուծության արդյունքում դիմումատուի իրավախախտման կատարած լինելու փաստը կասկած չի հարուցում:

Այսպիսով, դիմումատուի գործողություններում առկա է մեղքը, իսկ մեղքը դա անձի հոգեկան վերաբերմունքն է իր կատարած արարքին և դրան հաջորդող հետևանքին, որը կարող է դրսևորվել ինչպես **դիտավորությամբ**, այնպես էլ **անզգուշությամբ**, ինչի պարագայում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իմաստով որևէ նշանակություն չունի, թե կոնկրետ արարքը վարորդը կատարում է այն պատճառով, որ հստակ գիտակցում է, որ դա խախտում է և դիտավորությամբ կատարում, թե այն պատճառով, որ վարորդը գիտակցում է, որ այդ արարքը արգելված է օրենքով, սակայն ինքնավստահորեն հույս է ունեցել, որ դրա հետևանքները վրա չեն հասնի և թե այն պատճառով, որ վարորդը չի գիտակցել իր գործողության հակահիրավական բնույթը, սակայն կարող էր և պարտավոր էր գիտակցել այն (ՎԻՎՕ՝ հոդված 11)՝ զանցակազմի սուբյեկտիվ կողմ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակահիրավական, մեղավոր **(դիտավորյալ կամ անզգույշ)** այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն, հետևաբար ակնհայտ է, որ անկախ անձի կողմից մեղքի ձևի դրսևորումից (իրավախախտում թույլ տվող անձը) նշված օրենսգրքի համապատասխան հոդվածի դիսպոզիցիայով նկարագրված արարք կատարած անձը պետք է ենթարկվի վարչական պատասխանատվության Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում, ուստի դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 19.08.2021թ. թիվ 2113250904 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Սևակ Հովսեփյանին:

Ե.Կարապետյան

Կատարող Դ.Բալաբանյան
Հեռ.՝ 011 544-783